ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու

և դատական ակտի հրապարակման օր նշանակելու մասին

ԵԴ2/9162/02/25 քաղ. Երևան
5 Մեպտեմբերի 2025թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից 01.09.2025թվականին հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Պ/Կ Է.Խաչիյանի՝ «ԱՐ ՋԻ ԸՆԴ ԷՅ ՋԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված Հրաման N ԳՆ-1134-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին:

Հայցադիմումը և կից փաստաթղթերը էլեկտրոնային համակարգի միջոցով մակագրվել և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանի աշխատակազմին հասանելի է դարձել 02.09.2025թվականին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի

համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պետք է պահանջել դատարան ներկայացնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Պ/Կ Է.Խաչիյանի՝ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 01.08.2025թվականին կայացված Հրաման N ԳՆ-1134-Ա որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ գրուպ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Պ/Կ Է.Խաչիյանի՝ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին կայացված Հրաման N ԳՆ-1134-Ա որոշումն անվավեր ճանաչելու (վերացնելու) պահանջի մասին, ընդունել վարույթ:
2.«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությունից պահանջել դատարան ներկայացնել «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Պ/Կ Է.Խաչիյանի՝ «ԱՐ ՁԻ ԸՆԴ ԷՅ ՁԵՅ ԳՐՈՒՊ» ՍՊԸ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին 01.08.2025թվականին կայացված Հրաման N ԳՆ-1134-Ա որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:
4.Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2025թվականի հոկտեմբերի 17-ին:

5.Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան

Digitally signed by NAIRA AVETISYAN

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am